ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է *Արցախի*[*6)] Հանրապետությունում եկամտային հարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է *Արցախի*[*6)] Հանրապետությունում եկամտային հարկ վճարողների շրջանակը, եկամտային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:

Հոդված 2. Եկամտային հարկի հասկացությունը

1. Եկամտային հարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում հարկային գործակալի՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցով) սույն օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում *Արցախի*[*6)] Հանրապետության պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Գ Լ Ո Ւ Խ 2

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ

Հոդված 3. Եկամտային հարկ վճարողները

1. *Արցախի*[*6)] Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում *Արցախի*[*6)] Հանրապետության ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) և *Արցախի*[*6)] Հանրապետության ոչ ռեզիդենտ (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ) ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հարկ վճարողներ):

2. Սույն օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է *Արցախի*[*6)] Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը *Արցախի*[*6)] Հանրապետությունում է, ինչպես նաև *Արցախի*[*6)] Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես *Արցախի*[*6)] Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

Սույն օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը *Արցախի*[*6)] Հանրապետությունում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

3. Սույն օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան ռեզիդենտ չէ:

Հոդված 4. Հարկվող օբյեկտը

1. Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում *Արցախի*[*6)] Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների,

ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը:

2. Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում *արցախյան*[*6)] աղբյուրներից ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը:

3. Հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է, եթե սույն օրենքով հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ:

Հոդված 5. Համախառն եկամուտը

1. Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) բոլոր եկամուտների հանրագումարն է:

2. Եկամուտ է համարվում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) գույքը, ինչպես նաև բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները:

3. Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները համախառն եկամտում հաշվի են առնվում ազատ (շուկայական) գներով՝ *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Ֆիզիկական անձանց կողմից արտարժույթով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց ստացման իրավունքի ձեռքբերման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

5. Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների՝ այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում օտարված տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) վաճառքից ստացված եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով:

Հոդված 6. Նվազեցվող եկամուտները

1. Սույն օրենքի իմաստով նվազեցվող եկամուտներ են համարվում՝

1) *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրության համաձայն վճարված նպաստների գումարը, բացառությամբ *«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և վարձու աշխատողների, ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց մայրության*[*3)] նպաստների գումարների.

2) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Արցախի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները),

բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների.

3) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարները՝ ֆիզիկական անձի հարկվող եկամտի հինգ տոկոսը չգերազանցող չափով.

4) ապահովագրական հատուցումները, բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող հատուցումների (այդ թվում՝ կենսաթոշակների).

5) «Կուտակային կենսաթոշակների մասին» Արցախի Հանրապետության օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները.

5.1) Արցախի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անհատ ձեռնարկատիրոջ համար (օգտին) Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից կատարվող կուտակային վճարները.[*10)]

6) «Կուտակային կենսաթոշակների մասին» Արցախի Հանրապետության օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) կատարվող կուտակային հատկացումների հաշվին մինչև կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքի ձեռքբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացվող եկամուտները. [*6), *10)]

7) «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 33-36-րդ հոդվածների համաձայն՝ զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց մատուցված ծառայությունները կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների (կուրսանտների) *պաշտոնային դրույքաչափը և ծխախոտի դիմաց դրամական փոխհատուցումները* [*1)].

8) զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրության համաձայն տրված միանվագ վճարները.

9) *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրության համաձայն սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում վճարված պատվովճարները, դրամական օգնություններն ու օժանդակությունները.

10) *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրության համապատասխան վճարված ալիմենտները (ապրուստավճարները).

11) արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացվող եկամուտները.

12) *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) հետ կապված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողներին տրվող փոխհատուցման վճարները), բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների.

13) *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և դրամական միջոցները.

14) *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրված օգնության գումարները.

15) *Արցախի*[*6)] Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց անհատույց տրված գույքը և դրամական միջոցները.

16) *(ուժը կորցրած է ճանաչվել)*[*1)]

17) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացվող գումարները, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացվող գումարների.

18) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ սույն մասի 14-րդ և 15-րդ կետերում նշված կազմակերպությունները.

19) այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվել են որպես պատճառված վնասի փոխհատուցում, բացառությամբ կորցված եկամտի փոխհատուցման.

20) ստացվող վարկերի և փոխառությունների գումարները, բացառությամբ [*4)] պարտատիրոջ կողմից վարկի կամ փոխառության գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության (այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին).

20.1) (դադարել է գործել 2017 թվականի հունվարի 1-ից)[*4)]

21) աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով օգնության գումարները.

22) *Արցախի*[*6)] Հանրապետության հավաքականի կազմում միջազգային մրցույթներում և մրցություններում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները.

23) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50 000 ՀՀ դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները.[*6)]

24) մրցույթներում և մրցություններում ստացված դրամական մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում *50 000 ՀՀ դրամը*[*6)] չգերազանցող չափով.

25) *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները.

26) պետական պարգևները (մրցանակները).

27) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցված գումարները, բացառությամբ ավանդի գումարին հաշվեգրված և հատուցված տոկոսների.

28) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային բանկ «Արցախբանկ»-ում մինչև 1993 թվականի հունվարի 1-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցված գումարները.

29) *Արցախի*[*6)] Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆիզիկական անձանց անվամբ բացված նպատակային ժամկետային ավանդների համար հաշվեգրված և (կամ) վճարված տոկոսները կամ այլ հատուցումը.

30) պետության կամ համայնքների կարիքների համար ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը վերցնելու դիմաց այդ ֆիզիկական անձանց, ինչպես նաև դրանում հաշվառված (գրանցված) ֆիզիկական անձանց վճարված գումարները.

31) ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուների՝ ձեռագործ գորգերի իրացումից եկամուտը.

32) գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման՝ յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով.

33) «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները.[*7)]

34) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողների կողմից հավաստագրի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա մեկից մինչև հավաստագրի գործողության ժամկետի ավարտը տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից (բացառությամբ օտարմանը նախորդող առնվազն երկու տարի առաջ ձեռք բերված հաշվողական և համակարգչային տեխնիկայի, հաղորդակցական սարքավորանքի օտարման) ստացվող եկամուտները.

35) էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի ստացած ֆինանսական հատուցումը, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.[*11)]

36) պատերազմական գործողությունների ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձին, նրա ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին բանկերի կամ վարկային կազմակերպությունների տված վարկի գումարների ներման արդյունքում ֆիզիկական անձի եկամուտները՝ անկախ սույն մասի 20-րդ կետի դրույթներից:[*13)]

Հոդված 7. Արժեթղթերից ստացված եկամուտների հաշվառումը հարկվող օբյեկտում

1. Սույն հոդվածով այլ բան սահմանված չլինելու դեպքում հարկ վճարողի հարկվող օբյեկտի որոշման ժամանակ համախառն եկամուտը նվազեցվում է՝

1) ստացված շահաբաժինների չափով: Սույն օրենքի իմաստով շահաբաժին է համարվում իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում (հիմնադրամում) մասնակցությունից (բաժնեմասից, բաժնետոմսից, փայաբաժնից) ստացված եկամուտը.

2) գանձապետական պարտատոմսերից և պետական այլ արժեթղթերից, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամտի չափով.

3) գանձապետական պարտատոմսերի և պետական այլ արժեթղթերի, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով.

4) բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով.

5) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացված միջոցների (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից) չափով.

6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամտի չափով, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:[*12)]

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված եկամուտները ներառվում են համախառն եկամտում, եթե՝

1) ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, վճարագրի կամ վճարային այլ արժեթղթի օտարումից կամ

2) իրականում ստացվում է որպես ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների դիմաց վարձատրություն կամ փոխարինում է նման վարձատրությանը, անկախ արժեթղթի դիմաց իրական ներդրման կամ փոխատվության փաստի առկայությունից:

3. Անկախ ինվեստիցիոն բրոքեր կամ դիլեր համարվող հարկ վճարողն իր համախառն եկամտում կարող է չներառել սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված եկամուտները, եթե՝

1) հարկ վճարողի գրանցամատյանում (կամ գործարքների գրանցման այլ տեղում) արժեթուղթը մինչև դրա ձեռքբերման աշխատանքային օրվա ավարտը գրանցվել է որպես ներդրման նպատակով ձեռքբերված արժեթուղթ, և

2) վերջինս արժեթուղթը չի օտարում ձեռքբերման օրվանից հետո՝ քսանչորս ամսվա ընթացքում: Սույն կետի իմաստով օտարում է համարվում նաև արժեթուղթը գրավադրելը, օտարման

իրավունքով լիազորագրային կառավարման հանձնելը, օտարման իրավունք նախատեսող լիազորագրով այլ անձի հանձնելը կամ որևէ այլ գործարք, որ վկայում է դրա կատարման պահին արժեթղթի քողարկված փաստացի օտարումն այլ անձի:

4. Եթե հարկ վճարողն իրավունք ունի համախառն եկամտում չներառելու սույն հոդվածով սահմանված եկամուտը և, սույն օրենքի որևէ այլ հոդվածի համաձայն, իր համախառն եկամտում չի ներառում արժեթղթի ձեռքբերման գինը, ապա սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ իր համախառն եկամտում կարող է չներառել միայն տվյալ արժեթղթի ձեռքբերման գնի և իրացումից ստացված եկամտի (հասույթի) տարբերությունը:

Հոդված 8. Գյուղատնտեսական արտադրանքից ստացված եկամուտների հաշվառումը հարկվող օբյեկտում

1. Հարկվող օբյեկտի որոշման ժամանակ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկ վճարողի համախառն եկամուտը սույն հոդվածով սահմանված կարգով նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամտի չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամուտների հանրագումարում չի գերազանցում տասը տոկոսը: Այլ գործունեությունից ստացված եկամուտների տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամուտների հանրագումարում տասը տոկոսը գերազանցելու դեպքում այլ եկամուտների ամբողջ գումարի չափով համախառն եկամտից սույն մասով սահմանված նվազեցում չի կատարվում:

2. Սույն հոդվածի իմաստով գյուղատնտեսական արտադրանք են համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

1) հացահատիկային և հացահատիկաոլոռային մշակաբույսերը.
2) տեխնիկական մշակաբույսերը.
3) պալարապտղային, բանջարաբոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը.
4) դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
5) կերարտադրության այլ արտադրանքը.
6) պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
7) ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը.
8) ծառերի և թփերի սածիլները.
9) ծառերի և թփերի տնկիները.
10) անասնաբուծության արտադրանքը.
11) խոզաբուծության արտադրանքը.
12) ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը.
13) թռչնաբուծության արտադրանքը.
14) ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը.
15) եղջերաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.
16) ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.
17) ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

3. Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային զուտ եկամտային տվյալների վրա:

Հոդված 9. Գրավ դրված գույքի օտարումից ստացվող եկամուտը

1. Ֆիզիկական անձի կողմից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից, եթե վերջինս որպես գրավատու հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) գրավ դրված գույքը բռնագանձման արդյունքում (այդ թվում՝

հարկադիր կամ սնանկության աճուրդից գնման կամ հանձնման դեպքում) սեփականության իրավունքով գրավառու բանկին կամ վարկային կազմակերպությանն կամ պետության ստեղծած հիմնադրամին[8)] անցնելու դեպքում գրավատու ֆիզիկական անձի՝ գույքն օտարելուց ստացվող եկամուտ է համարվում գրավ դրված գույքի օտարման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:*

2. Բանկի կամ վարկային կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի[8)] սեփականությանն անցած (այդ թվում՝ պարտքի դիմաց ստացված)՝ գրավ դրված գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի*[8)] կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել էր բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին օտարելու դեպքում համարվում է, որ գրավատուն գույքն օտարելուց եկամուտ չի ստացել:*

3. Արտադատական կարգով բռնագանձման արդյունքում բանկի կամ վարկային կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի[8)] սեփականությանն անցած՝ գրավ դրված գույքի օտարումից ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին են համարվում՝*

1) բանկի կամ վարկային կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի[8)] կողմից այդ գույքի հետագա օտարման օրը և օտարման գինը, եթե այդ օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքի օտարման գին է համարվում օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գինը.*

2) գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գինը, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել: Ընդ որում, բանկը կամ վարկային կազմակերպությունը կամ պետության ստեղծած հիմնադրամը[8)] պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումն անկախ գնահատողի կողմից:*

4. Բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին կամ վարկային կազմակերպությանն կամ պետության ստեղծած հիմնադրամին[8)] ի սեփականություն անցած այդ գույքի վրա արգելանք դրվելու դեպքում սույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:*

5. Բանկը կամ վարկային կազմակերպությունը կամ պետության ստեղծած հիմնադրամը[8)] և ֆիզիկական անձ գրավատուն կարող են համաձայնել, որ սույն հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ գրավ դրված գույքի օտարման արդյունքում ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին համարվեն այն բանկին կամ վարկային կազմակերպությանը կամ պետության ստեղծած հիմնադրամին*[8)] ի սեփականություն անցնելու օրը և այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի որոշած շուկայական գինը: Սույն մասով սահմանված համաձայնությունը կնքվում է գրավոր:*

6. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ վարկային պարտավորություն է համարվում գրավ դրված գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանն կամ պետության ստեղծած հիմնադրամին[8)] ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը (այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները), ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և օտարելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք և գրավ դրված գույքի օտարման գնի 15 տոկոսը չգերազանցող ծախսերը:*[6)]

Հոդված 9.1. Վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստացված հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձը

1. Սույն օրենքով սահմանված կարգով վարձու աշխատողներին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվետու տարվա ընթացքում հաշվարկված եկամտային հարկը վերադարձվում է Արցախի Հանրապետության տարածքում

կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում առաջնային շուկայից, ինչպես նաև պետության և (կամ) պետության ստեղծած հիմնադրամի և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Արցախի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ Արցախի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և փաստացի բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված) գումարների չափով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված սահմանափակումները:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝

1) Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և առաջնային շուկայից, պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն կամ անհատական բնակելի տուն կառուցելուն փաստացի ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձման ենթակա եկամտային հարկը վարձու աշխատողին և անհատ ձեռնարկատիրոջը չի վերադարձվում, եթե բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու գործարքի պայմանագրային արժեքը կամ անհատական բնակելի տուն կառուցելու նախահաշվային արժեքը գերազանցում է 55 000 000 << դրամը.

2) Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և առաջնային շուկայից, պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն կամ անհատական բնակելի տուն կառուցելուն փաստացի ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով հիփոթեքային վարկի վարկառուին և առկայության դեպքում համավարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել վարձու աշխատողի համար յուրաքանչյուր եռամսյակի մասով 700 000 << դրամը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար յուրաքանչյուր հաշվետու տարվա մասով՝ 2 800 000 << դրամը.

*3) հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից վարկառու և համավարկառու ֆիզիկական անձինք իրենց ընտրությամբ կարող են օգտվել միայն մեկ հիփոթեքային վարկի պայմանագրի մասով:[*5), *6), *8)]*

*2. Սույն հոդվածով[*8)] նախատեսված գումարները՝*

1) վարձու աշխատողներին ենթակա են վերադարձման եռամսյակային, իսկ անհատ ձեռնարկատերերին՝ տարեկան պարբերականությամբ.

*2) հարկային գործակալի միջոցով հարկային պարտավորությունները կատարող վարձու աշխատողներին ենթակա են վերադարձման, եթե հարկային գործակալը ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի ամփոփ հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը[*5), *13)].*

*3) հարկային գործակալ չունեցող վարձու աշխատողներին ենթակա են վերադարձման, եթե վարձու աշխատողն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը[*5), *13)].*

*4) անհատ ձեռնարկատերերին ենթակա են վերադարձման, եթե նրանք ամբողջությամբ կատարել են տվյալ հաշվետու տարվա համար հարկային մարմին ներկայացված՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը[*5), *13)].*

*3. Սույն հոդվածով[*8)] նախատեսված գումարներից վարձու աշխատողներին վերադարձման*

ենթակա գումարների առավելագույն չափերը որոշելիս հաշվետու տարվա եռամսյակները դիտարկվում են առանձին-առանձին:

*4. Եթե սույն հոդվածով[*8)] նախատեսված գումարները վերադարձնելուց հետո հարկային մարմին է ներկայացվում եկամտային հարկի ճշտված ամսական ամփոփ (պարզեցված) հաշվարկ կամ ճշտված տարեկան եկամուտների մասին հաշվարկ, կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման հիման վրա փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկով տվյալ ֆիզիկական անձի մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը, որի արդյունքում՝*

*1) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝[*6)] տվյալ վարձու աշխատողի մասով (հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուի վարձու աշխատողի կողմից) հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ամսական ամփոփ (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը նվազում է վարձու աշխատողին վերադարձված եկամտային հարկի գումարից, ապա փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի վերադարձման օրվա դրությամբ հարկային գործակալին (հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուի վարձու աշխատողին) [*6)] առաջադրվում է եկամտային հարկի գծով պարտավորություն.*

*2) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝[*6)] տվյալ վարձու աշխատողի մասով (հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուի վարձու աշխատողի կողմից) հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ամսական ամփոփ (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է վարձու աշխատողին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող գումարի առավելագույն չափի վերահաշվարկ.*

3) համապատասխան հաշվետու տարվա համար անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը նվազում է անհատ ձեռնարկատիրոջը վերադարձված եկամտային հարկի գումարից, ապա փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի վերադարձման օրվա դրությամբ առաջադրվում է եկամտային հարկի գծով պարտավորություն.

4) համապատասխան հաշվետու տարվա համար անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է անհատ ձեռնարկատիրոջը, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող գումարի առավելագույն չափի վերահաշվարկ:

*4.1. Սույն հոդվածով նախատեսված վարձու աշխատողին և անհատ ձեռնարկատիրոջը եկամտային հարկի գումարների վերադարձը դադարեցվում է, եթե բնակարանի կամ անհատական բնակելի տան[*8)] ձեռքբերումից կամ բնակելի տան ավարտական ակտը և վկայականը ստանալու ամսաթվից սկսած՝ յուրաքանչյուր օրացուցային տարում վարկառուն առնվազն 183 օր փաստացի չի բնակվում տվյալ բնակարանում (բնակելի տանը) և (կամ) բնակարանը (բնակելի տունը) հանձնվել է վարձակալության կամ անհատույց օգտագործման, բացառությամբ մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց:[*5)]*

*5. Սույն հոդվածով նախատեսված՝ վարձու աշխատողին և անհատ ձեռնարկատիրոջը եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Արցախի[*6)] Հանրապետության կառավարությունը:*

*6. Սույն հոդվածի կիրառության նպատակով Արցախի[*6)] Հանրապետության կառավարության լիազորած մարմինը վարում է կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների[*8)] ռեեստրը և Արցախի[*6)] Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկություններ է տրամադրում հարկային մարմնին:[*2)]*

Հոդված 10. Ոչ ռեզիդենտի ստացման ենթակա եկամուտների հաշվառումը հարկվող օբյեկտում

1. Ոչ ռեզիդենտի հարկվող օբյեկտը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են սույն օրենքի 6-8-րդ հոդվածներով սահմանված եկամուտները, իսկ ոչ ռեզիդենտի՝ *արցախյան*[*6)] աղբյուրներից ստացված եկամուտները, կապված արտաքին տնտեսական գործունեության հետ, չեն ներառվում ոչ ռեզիդենտի համախառն եկամտում:

2. Սույն օրենքի իմաստով արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

1) ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից.

2) սույն մասի 1-ին կետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից.

3) ոչ ռեզիդենտի կողմից Արցախի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին ապրանքի մատակարարումը:[*6)]

3. *Արցախի*[*6)] Հանրապետությունում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից *արցախյան*[*6)] աղբյուրներից ստացման ենթակա (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտների հարկումը կատարվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Սույն օրենքի իմաստով *արցախյան*[*6)] աղբյուրներից ստացման ենթակա կամ ստացված եկամուտներ են համարվում՝

1) *Արցախի*[*6)] Հանրապետությունում աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումներ.

2) *Արցախի*[*6)] Հանրապետությունում քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները.

3) *Արցախի*[*6)] Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից (արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից) ստացման ենթակա եկամուտները.

4) ստացված պասիվ եկամուտները և ցանկացած այլ հիմքով *արցախյան*[*6)] աղբյուրներից ստացված եկամուտները:

4. Պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ) *Արցախի*[*6)] Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, մասնավորապես՝

1) շահաբաժինները.

2) տոկոսները.

3) ռոյալթիները.

4) *Արցախի*[*6)] Հանրապետությունում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը.

5) *Արցախի*[*6)] Հանրապետությունում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաճը.

6) փոխադրման ծառայությունների (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտները:

ԳԼՈՒԽ 3

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 11. Եկամտային հարկի դրույքաչափերը

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-9-րդ մասերում նշված դեպքերի՝

1) հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է ամսական հարկվող եկամտի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով, բացառությամբ սույն մասի 1.1-ին և 1.2-րդ կետերով նախատեսված դեպքերի.

Ժամանակահատվածը	***Եկամտային հարկի դրույքաչափը***
2021 թվականի հունվարի 1-ից	*15 տոկոս*
2022 թվականի հունվարի 1-ից	*14 տոկոս*
2023 թվականի հունվարի 1-ից	*13 տոկոս*[*10), *11), *13)]

1.1) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալը հավաստագրի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա մեկից մինչև հավաստագրի գործողության ժամկետի ավարտն աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 5 տոկոս դրույքաչափով.[*11)]

1.2) բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկային գործակալը աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 3 տոկոս դրույքաչափով:[*13)]

2) հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է տարեկան հարկվող եկամտի նկատմամբ *սույն մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափով* [*10), *13)].

2. Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում կուտակված գումարները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձի կողմից միանվագ ստանալու դեպքում այդ գումարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները:

3. Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող կենսաթոշակների մասով եկամտային հարկը հաշվարկվում է վեց տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները:[*6)] [*10)]

4. Ռոյալթիների և գույքի վարձակալությունից ստացված եկամուտներից, ինչպես նաև բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների անհատ ձեռնարկատեր չհամարվող այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում՝ շենքի ընդհանուր տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքների) 10 տոկոսը, սակայն ոչ ավելի քան 500 քառակուսի մետր մակերեսը, իսկ բնակելի թաղամասերում (կամ համալիրներում) չորս անհատական բնակելի տների քանակը (այսուհետ՝ չհարկվող շեմ) գերազանցող տարածքների վաճառքից ստացված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է վեց տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները: Ընդ որում, չհարկվող շեմը նշված չափով կիրառվում է բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի մակերեսի կամ բնակելի թաղամասերում (համալիրներում) անհատական բնակելի տների համար միայն մեկ անգամ՝ անկախ շենքի տարբեր բնակարանների կամ անհատական բնակելի տների իրացման ժամկետներից և կառուցապատող և (կամ) փայատեր ֆիզիկական անձանց քանակից:

Սույն օրենքի իմաստով ռոյալթի է համարվում գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրի կամ արդյունաբերական առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացված հատուցումը:

5. Տոկոսների համար եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները:

Տոկոսների համար սույն մասով, ինչպես նաև ռոյալթիների և գույքի վարձակալության դիմաց եկամուտներից սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերը չեն կիրառվում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից որպես անհատ ձեռնարկատեր տոկոսների, ռոյալթիների և գույքի վարձակալության դիմաց ստացման ենթակա եկամուտների նկատմամբ: Այդ դեպքում հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափով:

6. Հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է վեց տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները:

7. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և *Արցախի*[*6)] Հանրապետությունում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում հարկային գործակալը հարկ վճարողին եկամուտներ վճարելիս (բացառությամբ՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց եկամուտներ վճարելիս) եկամտային հարկը հաշվարկում և պահում է 10 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամուտների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկ վճարողին վճարված եկամուտները հիմնավորվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով կամ կրճատ հաշիվ-ապրանքագրերով:

8. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված առևտրի հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում են տարեկան հարկվող եկամտի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից:*[6)]

(երկրորդ, երրորդ և չորրորդ պարբերությունները ուժը կորցրած է ճանաչվել) [*6)]

8.1. Հարկման ընդհանուր համակարգում գտնվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում են տարեկան հարկվող եկամտի 13 [*10), *13)] *տոկոսի չափով, բայց ոչ պակաս 60 000 << դրամից:*

8.2. Հարկման ընդհանուր համակարգում գտնվող, ինչպես նաև հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը վճարում են նվազագույն եկամտային հարկ՝ ամսական 5 000 << դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):

Հարկային մարմնին գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացրած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող ամսվանից մինչև գործունեությունը վերսկսելու ամիսն ընկած ժամանակահատվածի համար սույն մասով սահմանված չափով նվազագույն եկամտային հարկ չի վճարում:

8.3. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը) արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով եկամտային հարկ չեն հաշվարկում և չեն վճարում:

8.4. Հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ և (կամ) հաջորդաբար հարկման տարբեր համակարգերով գործունեություն իրականացնելու դեպքում՝

1) հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի կամ արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության տեսակներից ստացված (անհատ ձեռնարկատերերի համար՝ ստացման ենթակա) եկամուտները և այդ ժամանակահատվածին վերաբերող նվազեցումները, ինչպես նաև վճարված հաստատագրված վճարները, արտոնագրային վճարներն ու առևտրի հարկը հաշվի չեն առնվում հարկման ընդհանուր համակարգում գտնվող գործունեության տեսակների մասով հարկվող եկամուտը որոշելիս.

2) հարկման ընդհանուր համակարգում գտնվող, ինչպես նաև հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի կամ արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության

տեսակների մասով անհատ ձեռնարկատերը վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում (ըստ հարկման համակարգերի), իսկ ժամանակաշրջանի ծախսերը (որոնք ըստ հարկման համակարգերի հնարավոր չէ առանձնացնել) բաշխվում են՝ ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ հարկման տարբեր համակարգերում գտնվող գործունեության տեսակներից ստացված (ստացվող) եկամուտների տեսակարար կշիռներից (ըստ հարկման համակարգերի համախառն եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում չվարելու դեպքում դրանց մեծությունը հարկային մարմնի կողմից որոշվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով):[*6)]

9. Հարկային գործակալների կողմից ֆիզիկական անձանց հաշվետու տարվա ընթացքում վճարման ենթակա պասիվ եկամուտները (մասնավորապես՝ տոկոս, ռոյալթի, գույքի վարձակալության դիմաց եկամուտ, գույքի արժեքի հավելաճ կամ գույքի ձեռքբերման դիմաց եկամուտ) հարկվող շահույթը (եկամուտը) որոշելիս համախառն եկամտից նվազեցնելու դեպքում նվազեցման կատարման տարվան հաջորդող տասներկուամսյա ժամանակահատվածում չվճարվելու դեպքում վճարման ենթակա այդ պասիվ եկամուտների նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով և ներառվում 12-րդ ամսվա ամփոփ հաշվարկում, իսկ հարկի գումարը ենթակա է վճարման *Արցախի*[*6)] Հանրապետության պետական բյուջե այդ ժամանակահատվածին հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ: Սույն մասի դրույթները չեն վերաբերում բանկերին և վարկային կազմակերպություններին՝ այլ անձանցից ներգրավված վարկերի, փոխառությունների և ավանդների դիմաց վճարվող տոկոսների մասով, ինչպես նաև այլ կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից թողարկված և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող գումարների մասով:

Հոդված 12. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամտային հարկի դրույքաչափերը

1. Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց *արցախյան*[*6)] աղբյուրներից եկամուտներ վճարելիս հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ հետևյալ դրույքաչափերով.

1) ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումներից և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից՝ հինգ տոկոս.

2) ռոյալթիներից, տոկոսներից, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտներից, գույքի արժեքի հավելաճից՝ 10 տոկոս.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերում չնշված այլ հարկվող եկամուտներից՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված դրույքաչափերով՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշված հարկվող եկամտից:

2. Սույն հոդվածում նշված դրույքաչափերով հարկային գործակալի պահած (գանձած) գումարները համարվում են *Արցախի*[*6)] Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի համար եկամտային հարկի վերջնական գումար, բացառությամբ այն դեպքերի, երբ նա՝

1) ռեզիդենտ է, և հարկային գործակալների կողմից եկամտի վճարման աղբյուրի մոտ պահած (գանձած) հարկը ենթակա է վերահաշվարկման, կամ

2) *Արցախի*[*6)] Հանրապետությունում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն և հարկային գործակալների կողմից եկամտի վճարման աղբյուրի մոտ պահած (գանձած) հարկը, հաշվի առնելով սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պայմանները, ենթակա է վերահաշվարկման:

ԳԼՈՒԽ 4

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Հոդված 13. Հարկային գործակալի կողմից եկամտային հարկը պահելը

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի, հարկ վճարողներին եկամուտներ հաշվարկելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը:

Եթե *Արցախի*[*6)] Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերով *Արցախի*[*6)] Հանրապետությունում կազմակերպություններն ազատվում են ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից աղբյուրի մոտ եկամտային հարկի պահումից, ապա այդ կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի հաստատած ձևով գրավոր հայտարարության հիման վրա հանդես գալ որպես հարկային գործակալ և իրականացնել ֆիզիկական անձանց հաշվարկվող եկամուտներից հարկի պահում: Այս դեպքում հարկային գործակալը հարկի պահումը կատարում է հայտարարությունը ներկայացնելու ամսվանից սկսած:

2. Հարկային գործակալը հարկի պահում (գանձում) չի իրականացնում, եթե՝

1) վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են, և հարկային գործակալի հետ կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), անձնագրի տվյալները, *Արցախի*[*6)] Հանրապետությունում բնակության հասցեն և ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը, կամ

2) ֆիզիկական անձին վճարվում են մրցույթների և մրցությունների իրային շահումներ (մրցանակներ), ինչպես նաև խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած շահումներ:

Հոդված 14. Եկամտային հարկի հաշվարկման կարգը և հաշվարկների ներկայացումը

1. Հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս սույն օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով սահմանված դրույքաչափերով հաշվարկում են եկամտային հարկը՝ դրանից պակասեցնելով վարձու աշխատողների համար հաշվարկած և տվյալ ամսում փաստացի վճարված՝ *«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և վարձու աշխատողների, ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց մայրության*[*3)] նպաստների գումարները: Ընդ որում, սույն մասով սահմանված նպաստները պակասեցված են համարվում պակասեցման ամսվան հաջորդող ամսվա 20-ից:

Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը բավարար չէ սույն հոդվածով սահմանված նպաստները վճարելու համար, ապա հարկային գործակալը նպաստը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցվում է պետական բյուջեից մեկամսյա ժամկետում՝ *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Հարկային գործակալները պարտավոր են սույն մասով սահմանված դեպքերում բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար գրանցման հայտ (բացառությամբ Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց), որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի): Գրանցման հայտը ներկայացվում է՝

1) վարձու աշխատողին աշխատանքի ընդունելու (քաղաքացու հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու) դեպքում.

2) վարձու աշխատողին աշխատանքից ազատելու (օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունները դադարելու) դեպքում.

3) քաղաքացու հետ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու, քաղաքացու հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու (պայմանագիրը լուծելու, դադարելու) դեպքում.

4) Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու, այդ արձակուրդն ավարտվելու դեպքում.

5) սույն մասով սահմանված՝ գրանցման հայտի հիման վրա ներկայացված որևէ տվյալում (այդ թվում՝ վարձու աշխատողի պաշտոնին վերաբերող) փոփոխություն կատարելու դեպքում.

6) վերակազմակերպմամբ (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում) պայմանավորված՝ վարձու աշխատողների տեղափոխման դեպքում: Սույն կետով սահմանված դեպքում գրանցման հայտը ներկայացվում է օրենքով սահմանված կարգով իրավանախորդ և իրավահաջորդ ճանաչված գործատուների կողմից:

*Հարկային գործակալները սույն մասի 1-ին կետով սահմանված գրանցման հայտը հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողին աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն,[*8)] իսկ սույն մասի 2-6-րդ կետերով սահմանված գրանցման հայտը հարկային մարմին են ներկայացնում մինչև հանգամանքն առաջանալու (հաշվետու) ամսվա համար եկամտային հարկի ամփոփ հաշվարկը ներկայացնելը:*

*2.1. Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել՝ եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացողի և Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձի) ֆիզիկական անձանց համար հաշվարկված (քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարված) եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի, իսկ սոցիալական վճարներ կատարող ֆիզիկական անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների[*10)] վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:*

*Եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներառվում են նաև հաշվետու ամսում պասիվ եկամուտներ ստացած Արցախի Հանրապետության ֆիզիկական անձանց և Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների:[*5),*6)]*

3. Եթե նոր աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա տվյալ անձի համար գրանցման հայտը և (կամ) եկամտային հարկի ամփոփ հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

4. Եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ստացման ենթակա (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտներից սույն օրենքի և *Արցախի*[*6)] Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթներին համապատասխան եկամուտների ստացման աղբյուրի մոտ եկամտային հարկի պահում չի իրականացվում (գանձում չի կատարվում), ապա անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք եկամտային հարկը հաշվարկում են յուրաքանչյուր ամիս՝ հիմք ընդունելով սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դրույքաչափերը և յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ը բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում հարկային մարմնի սահմանած ձևի եկամտային հարկի պարզեցված հաշվարկ:

5. Հարկային գործակալները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմիններին ներկայացնել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Հոդված 15. Եկամտային հարկի գումարը բյուջե վճարելը

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Հոդված 16. Հարկային մարմնի և հարկային գործակալի կողմից տեղեկանքներ տրամադրելը

1. Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա ղարաբաղյան աղբյուրներից պահված հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմինները տրամադրում են համապատասխան տեղեկանք՝ հարկային մարմնի սահմանված ձևով և կարգով:

2. Հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով նրանց տրամադրել հաշվարկված և վճարված եկամուտների, պահված հարկի գումարների, ինչպես նաև գործատուի կողմից աշխատողի համար կատարված *սոցիալական վճարների*[*10)] մասին տեղեկանքներ:

Գ Լ Ո Ւ Խ 5

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 17. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հաշվառումը

1. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման հաշվեգրման եղանակը՝ իրավաբանական անձանց համար «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 18. Հարկվող օբյեկտի որոշման առանձնահատկությունները

1. Ձեռնարկատիրական գործունեությունից եկամտային հարկի հարկվող օբյեկտի որոշման ժամանակ, բացի սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտներից, համախառն եկամուտը նվազեցվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացման ենթակա կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտների հետ անմիջականորեն կապված և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով՝ ֆիզիկական անձի ներկայացրած տարեկան եկամուտների մասին հաշվարկի հիման վրա:

2. Ծախսերի թվին են դասվում մասնավորապես՝

1) նյութական ծախսերը.

2) աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները.

3) գործատուի կողմից վարձու աշխատողի համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում կատարվող կենսաթոշակային վճարները՝ տվյալ վարձու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հանրագումարի 7,5 տոկոսը չգերազանցող մասով. [*10)]

3.1) իր համար՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում կատարվող կենսաթոշակային վճարների այն մասը, որը չի գերազանցում հարկվող օբյեկտի հինգ տոկոսը.[*10)]

4) ամորտիզացիոն մասհանումները.

5) վարձակալական վճարները.

6) ապահովագրական վճարները.

7) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը, բնօգտագործման վճարները և այլ պարտադիր վճարները.

8) վարկերի և այլ փոխառությունների տոկոսները.

9) երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային այլ ծառայությունների համար վճարները.

10) գովազդային ծախսերը.

11) ներկայացուցչական ծախսերը.

12) հովանավորչական ծախսերը.

13) դատական ծախսերը.

14) գործուղման ծախսերը.

15) պատճառած վնասի հատուցումը.

16) տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների, *կամ կուտակային կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումների կամ հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ գումարների մասով օրենքով սահմանված կարգով հաշվարկվող և վճարվող*[*10)] տույժերի, տուգանքների և գույքային այլ պատժամիջոցների.

17) աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը.

18) ֆակտորինգային, հավատարմագրային (լիզինգային) գործառնությունների ծախսերը:

3. Ծախս չեն համարվում այլ անձի կանոնադրական կապիտալում հարկ վճարողի կատարած ներդրումները*, ինչպես նաև «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողների կողմից հավաստագրի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա մեկից մինչև հավաստագրի գործողության ժամկետի ավարտը տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից (բացառությամբ օտարմանը նախորդող առնվազն երկու տարի առաջ ձեռք բերված հաշվողական և համակարգչային տեխնիկայի, հաղորդակցական սարքավորանքի օտարման) ստացվող եկամուտների ստացման հետ կապված ծախսերը*[*11)]:

3.1. Ծախս չեն համարվում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված ծախսերը:[*11)]

4. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման դեպքում ամորտիզացիոն մասհանումների և այլ ծախսերի հաշվարկման, համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի, ծախսատեսակների համար *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարության սահմանած նորմերի, համախառն եկամտից ծախսերի նվազեցման իրականացման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հաշվետու տարվա վնասների մասով կիրառվում են իրավաբանական անձանց համար «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված նորմերը:

5. Փաստաթղթերով ծախսերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարությունը:

Հոդված 19. Եկամտային հարկի գումարի հաշվարկումը

1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին*, 8-րդ և 8.1-ին*[*13)] մասերով սահմանված դրույքաչափերով եկամտային հարկի փաստացի գումարի վերջնական հաշվարկումը կատարում է հարկ վճարողն ինքնուրույնաբար և սահմանված կարգով արտացոլում է տարեկան եկամուտների մասին հաշվարկում:

Հոդված 20. Եկամտային հարկի կանխավճարները

1. Տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից (բացառությամբ հաստատագրված վճարներով և (կամ) առևտրի հարկով հարկվող գործունեության) եկամուտներ ստացող հարկ վճարողը պարտավոր է կատարել եկամտային հարկի կանխավճարներ՝ սույն հոդվածի 2-6-րդ մասերով սահմանված կարգով և ժամկետներում:

2. Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ նախորդ տարվա եկամտային հարկի փաստացի գումարի 18.75 տոկոսի *և տվյալ եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված նվազագույն եկամտային հարկի գումարի դրական տարբերության*[*6)] չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 20-ից ոչ ուշ: Սահմանված ժամկետներում կանխավճարային մուծումներ չկատարելու և օրենքով սահմանված այլ դեպքում հարկային

մարմիններն այդ կանխավճարային գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Այն հարկատուն, որը հարկային մարմնին ներկայացրել է գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն, կարող է նշյալ հայտարարությունը ներկայացնելուց հետո եկամտային հարկի կանխավճարներ չկատարել: Մինչև նախորդ տարվա փաստացի եկամտային հարկի գումարի հաշվարկումը հարկ վճարողը եկամտային հարկի կանխավճարները առաջին անգամ մարտի 20-ից ոչ ուշ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի չափից ոչ պակաս:

3.1. Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող եկամուտը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն եռամսյակային կանխավճարի մեծությունը որոշում է ինքնուրույն՝ ընթացիկ տարվա հունիսի 1-ից ոչ ուշ՝ հարկային մարմիններին ներկայացնելով վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևի հայտարարություն: Կանխավճարի և նվազագույն եկամտային հարկի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի եկամտային հարկի (ներառյալ՝ նվազագույն եկամտային հարկի գումարը) 75 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված եկամտային հարկի (առանց նվազագույն եկամտային հարկի գումարի) 18,75 տոկոսի և տվյալ եռամսյակում փաստացի կատարված կանխավճարի (առանց նվազագույն եկամտային հարկի գումարի) տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված օրվանից մինչև հարկային մարմնին փաստացի եկամտային հարկի գումարը հայտնի դառնալու (տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելու) օրը:[*6)] *Հարկային մարմին գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացված լինելու դեպքում դրա հետևանքով եռամսյակային կանխավճար չհաշվարկված եռամսյակի (եռամսյակների) համար տույժեր չեն հաշվարկվում:*[*5)]

4. Հարկ վճարողը հաշվետու տարվա ավարտից հետո, ելնելով հաշվարկված հարկվող օբյեկտից, հաշվարկում է եկամտային հարկի գումարը՝ դրանից հաշվանցելով տվյալ հաշվետու տարվա համար վճարված կանխավճարների գումարները:

5. Եթե հաշվետու տարվա փաստացի եկամտային հարկի *(այդ թվում՝ նվազագույն եկամտային հարկի)*[*6)] գումարը պակաս է տվյալ տարվա համար կատարված կանխավճարների *և նվազագույն եկամտային հարկի*[*6)] հանրագումարից, ապա դրանց տարբերությունը ենթակա է վերադարձման՝ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն: Այս դեպքում կանխավճարների գումարների նկատմամբ հաշվարկված տույժերի հաշվարկը դադարեցվում է հարկային մարմնին փաստացի եկամտային հարկի գումարը հայտնի դառնալու (տարեկան եկամուտների մասին հաշվարկի ներկայացման) օրը, բայց մայիսի 1-ից ոչ ուշ: Կանխավճարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները վերահաշվարկման կամ վերադարձման ենթակա չեն:

6. Եթե կատարված կանխավճարների *և նվազագույն եկամտային հարկի*[*6)] հանրագումարը պակաս է տվյալ հաշվետու տարվա փաստացի եկամտային հարկի *(այդ թվում՝ նվազագույն եկամտային հարկի)*[*6)] գումարից, ապա վերահաշվարկ է կատարվում միայն եկամտային հարկի գծով, և հարկ վճարողը պարտավոր է առաջացած տարբերությունը վճարել պետական բյուջե: Այս դեպքում կանխավճարների գծով տույժերի հաշվարկը դադարեցվում է հարկային մարմնին փաստացի եկամտային հարկի գումարը հայտնի դառնալու (տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնելու) օրը: Եկամտային հարկի գումարի վճարումն ուշացնելու համար տույժերի հաշվարկը սկսվում է մայիսի 1-ից՝ եկամտային հարկի գումարի չվճարված մասի նկատմամբ, «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված չափերով:

Հոդված 21. Անվճարունակության գործընթացում գտնվող անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտային հարկի վճարման առանձնահատկությունը

1. Անհատ ձեռնարկատերերի անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից եկամտային հարկի վճարումները կասեցվում են մինչև պարտատերերի պահանջների բավարարման՝ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

Հոդված 21.1. Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտային հարկի վճարման առանձնահատկությունները

1. Անհատ ձեռնարկատերերը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հաշվետու տարիների համար ազատվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներից եկամտային հարկի վճարումից:

2. Անհատ ձեռնարկատերերը կարող են հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արտոնությունից իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությունը սույն հոդվածով սահմանված հաշվետու տարիների համար ներկայացվում է յուրաքանչյուր տարի մինչև տվյալ տարվա հունվարի 20-ը ներառյալ, բացառությամբ 2020 և 2021 թվականների հաշվետու տարիների, որոնց համար ներկայացվում են մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ: Նոր ստեղծված (հաշվառում ստացած) անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությունը հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում մինչև հաշվառման ամսվան հաջորդող ամսվա 1-ը ներառյալ: [*13)]

Գ Լ Ո Ւ Խ 6

ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Հոդված 22. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի ներկայացման կարգը և ժամկետները

1. Հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հարկային տարվա համար մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել տարեկան եկամուտների մասին հաշվարկ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի ներկայացումը պարտադիր չէ այն ֆիզիկական անձանց համար, որոնց կողմից հաշվետու տարվա ընթացքում ստացվել կամ ստացման ենթակա են եղել՝

1) բացառապես սույն օրենքի 6-8-րդ հոդվածներով սահմանված եկամուտներ, կամ

2) բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից եկամտային հարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալի վրա:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնելու դեպքում ֆիզիկական անձինք տարեկան եկամուտների մասին հաշվարկում չեն ներառում սույն օրենքի 6-8-րդ հոդվածներով սահմանված նվազեցվող եկամուտները:

4. Անչափահաս անձանց եկամուտները հայտարարագրում են նրանց ծնողները (խնամակալները):

5. Տարեկան եկամուտների մասին հաշվարկ չներկայացնելը հարկ վճարողին չի ազատում սույն օրենքին և *Արցախի* [*6)] Հանրապետության օրենսդրական այլ ակտերին համապատասխան հարկային պարտավորությունները կատարելուց:

6. Հաշվետու ժամանակաշրջանի համար տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելուց հետո հարկ վճարողներն իրավունք ունեն ճշգրտումներ մտցնելու դրանցում արտացոլված տվյալներում՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երեք օրացուցային տարվա ընթացքում:

Հոդված 23. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի հիման վրա հարկի վերջնահաշվարկը և վճարման ժամկետները

1. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի հիման վրա կատարվում է եկամտային հարկի վերջնահաշվարկ՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները:

2. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի արդյունքներով եկամտային հարկ վճարողը պարտավոր է եկամտային հարկի գումարը վճարել պետական բյուջե տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ից ոչ ուշ:

3. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի արդյունքներով հարկ վճարողի՝ բյուջե ավել վճարած (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) հարկի գումարները ենթակա են վերադարձման հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Հոդված 24. Կրկնակի հարկման բացառումը

1. Ռեզիդենտների՝ *Արցախի*[*6)] Հանրապետությունից դուրս ստացված (ստացման ենթակա) եկամտի գումարը ներառվում է *Արցախի*[*6)] Հանրապետությունում հայտարարագրվող տարեկան եկամտի ընդհանուր գումարի մեջ և հաշվի է առնվում հարկի չափը որոշելիս:

2. *Արցախի*[*6)] Հանրապետության ռեզիդենտների վճարած (գանձված) եկամտային հարկը պակասեցվում է հարկի այն գումարի չափով, որը նրանից գանձվել է օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ այն եկամուտներից օտարերկրյա պետություններում գանձված հարկի գումարի, որը, *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրության համապատասխան, ենթակա է նվազեցման համախառն եկամտից: Ընդ որում, պակասեցվող (հաշվանցվող) հարկի գումարի չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված (ստացման ենթակա) եկամտից՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան *Արցախի*[*6)] Հանրապետությունում վճարման ենթակա հարկի գումարին:

Գ Լ Ո Ւ Խ 7

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25. Սույն օրենքի խախտման համար ֆիզիկական անձանց և հարկային գործակալների պատասխանատվությունը

1. Սույն օրենքի խախտման համար հարկ վճարողները և հարկային գործակալները պատասխանատվություն են կրում *Արցախի*[*6)] Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի դրույթների համաձայն՝ եկամտային հարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) դեպքում հարկային պարտավորությունը (այդ թվում՝ եկամտային հարկը սահմանված ժամկետներում բյուջե չվճարելու համար *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) կրում է հարկային գործակալը:

3. Հարկային գործակալի կողմից, սույն օրենքի դրույթների համաձայն, ֆիզիկական անձանց հաշվարկված եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից, *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք օրացուցային տարվա համար:

3.1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 2.1-ին մասի երկրորդ պարբերության[*6)] *պահանջները խախտելու համար հարկային գործակալներից գանձվում է տուգանք՝ հարկային մարմին չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար հինգ հազար ՀՀ դրամի չափով:*[*5)]

4. Հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկում սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տրված վնասի *13* [*10), *13)] տոկոսի չափով:

5. Աշխատողի աշխատանքի ընդունումը *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) *և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու* [*5)] փաստը *հարկային մարմնի կողմից իրականացվող հարկային ստուգումների ընթացքում, ինչպես նաև ապօրինի գործունեություն իրականացնողների մոտ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում*

գործատուից (այդ թվում՝ ապօրինի գործունեություն իրականացնողներից կամ սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած ֆիզիկական անձանցից) յուրաքանչյուր չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի վարձու աշխատողի համար գանձվում է տուգանք[*5), *6), *9)]՝

1) 60.000 դրամի չափով, եթե չձևակերպված *և (կամ) առանց գրանցման հայտի*[*5)] վարձու աշխատողների քանակը մեկից երեք է,

2) 150.000 դրամի չափով, եթե չձևակերպված *և (կամ) առանց գրանցման հայտի*[*5)] վարձու աշխատողների քանակը չորսից վեց է,

3) 300.000 դրամի չափով, եթե չձևակերպված *և (կամ) առանց գրանցման հայտի*[*5)] վարձու աշխատողների քանակը յոթից ինն է,

4) 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված *և (կամ) առանց գրանցման հայտի*[*5)] վարձու աշխատողների քանակը գերազանցում է ինը:

Սույն մասի կիրառության իմաստով՝ նոր աշխատողի համար սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գրանցման հայտը նույն մասի երկրորդ պարբերությամբ նշված ժամկետում[*6)] *չներկայացնելու համար սահմանված տուգանքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգմամբ հայտնաբերվել է փաստացի աշխատանք կատարող վարձու աշխատող, որի համար գրանցման հայտը չի ներկայացվել մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ ստուգումը փաստացի սկսելու օրը աշխատանքի ընդունման դեպքում՝ մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվա ժամը 14:00-ն:*[*5),*8)]

Սույն մասում նշված հարկի գումարները հարկային գործակալները պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխատողներին սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձից պահված և վճարված եկամտային հարկի ամբողջ գումարի չափով լրացուցիչ պարտավորություն, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցրել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա *Արցախի*[*6)] Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշվող մեծության նվազման:

Սույն մասով սահմանված պատասխանատվության միջոցը չի կիրառվում այն դեպքերում, երբ տվյալ հաստիքային միավորի համար վարձու աշխատողը փոխարինվել է տվյալ գործատուի մոտ չաշխատող այլ վարձու աշխատողով, կամ եթե գործատուն օրենսդրության կամ միջազգային իրավական ակտերի համաձայն, մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ազատված է եղել իր հաշվին պարտադիր սոցիալական ապահովության վճարներ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից:

Հոդված 26. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

1.Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է հարկային մարմինը[*6)]:

Հոդված 27. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-46 և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի ապրիլի 22-ի ՀՕ-13 օրենքները:

Հոդված 28. Անցումային դրույթներ

1. 2014 թվականի ընթացքում կամ մինչ այդ առաջացած եկամտահարկի կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները 2014 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում, և դրանք ենթակա են կատարման «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

2. 2014 թվականի առաջին եռամսյակի համար եկամտային հարկի կանխավճարները հաշվարկվում են՝

1) եկամտահարկի գծով 2013 թվականի վերջին կանխավճարի չափից ոչ պակաս չափով (եթե մինչև 2014 թվականի մարտի 20-ը հարկ վճարողի կողմից 2013 թվականի եկամտահարկի գումարը դեռևս հաշվարկված չէ), կամ

2) 2013 թվականի եկամտահարկի գումարի 18.75 տոկոսի չափով (եթե մինչև 2014 թվականի մարտի 20-ը հարկ վճարողի կողմից հաշվարկվել է 2013 թվականի եկամտահարկի գումարը):

2014 թվականի առաջին եռամսյակի համար եկամտային հարկի կանխավճարները վճարվում են մինչև 2014 թվականի մարտի 20-ը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված եկամտային հարկի ամփոփ հաշվարկը առաջին անգամ ներկայացնելը, հարկային գործակալները պարտավոր են մինչև նշյալ հաշվարկն առաջին անգամ ներկայացնելու պահը իրենց մոտ գրանցված վարձու աշխատողների համար հարկային մարմին ներկայացնել սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գրանցման հայտերը:

4. Մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը աշխատանքային պայմանագիրը լուծվելու և վարձու աշխատողի հետ վերջնահաշվարկի գումարները 2014 թվականի ընթացքում վճարվելու դեպքում այդ գումարների նկատմամբ հարկերը և (կամ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկվում են մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը գործող օրենքներին համապատասխան:

5. Մինչև սույն օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգի սահմանումը, բայց ոչ ուշ, քան մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը, սույն օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված չափերով եկամտային հարկի գումարները հաշվարկվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կարգով աշխատողի աշխատանքի ընդունումը *Արցախի*[*6)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու փաստն արձանագրելու դեպքերում:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ փաստացի գործունեություն չիրականացնող (գործունեությունը փաստացի դադարեցրած) անհատ ձեռնարկատերերը մինչև գործունեությունը վերսկսելու ամիսն ընկած ժամանակահատվածի համար սույն օրենքով սահմանված չափով նվազագույն եկամտային հարկ չեն վճարում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

28 դեկտեմբերի 2013թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-86-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*5)]

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 5-րդ հոդվածը, որը վերաբերում է «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններին ու 25-րդ հոդվածի 3.1-ին և 5-րդ մասերին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2017 թվականի ապրիլի 1-ից:

2. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության 1-ին կետի դրույթները կիրառվում են 2017 թվականի ապրիլի 1-ից հետո կատարվող վճարումների մասով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
*Օ Ր Ե Ն Ք Ը [*8)]*

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 5-րդ հոդվածը, որը վերաբերում է «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.1-ին հոդվածին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 5.

*1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի[*12)]:*

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածը կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից ձեռքբերված անհատական բնակելի տների նկատմամբ:

3. Օրենքի 9.1-ին հոդվածի 1.1-ին մասի 1-ին կետը կիրառվում է բնակարանների կամ անհատական բնակելի տների ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տների կառուցմանն ուղղված՝ 2019 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի նկատմամբ:

*4. Օրենքի 9.1-ին հոդվածի 1.1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:[*12)]*

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
*Օ Ր Ե Ն Ք Ը [*10)]*

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 7-րդ հոդվածը, որը վերաբերում է «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8.1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ու 2-րդ կետերին և 25-րդ հոդվածի 4-րդ մասին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին վերաբերվող դրույթն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, 8.1-ին մասին և 25-րդ հոդվածի 4-րդ մասին վերաբերվող դրույթների գործողությունը տարածվում է 2019 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*11)]

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 4-րդ հոդվածը, որը վերաբերում է «Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետին, 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ու 1.1-ին կետերին և 18-րդ հոդվածի 3-րդ մասին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 4. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված 34-րդ կետի, 2-րդ հոդվածի և 3-րդ հոդվածով սահմանված 1-ին կետի դրույթները գործում են մինչև 2029 թվականի հունվարի 1-ը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*12)]

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՒ ««ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 3-րդ հոդվածը, որը վերաբերում է «Եկամտային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*13)]

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 7-րդ հոդվածը, որը վերաբերում է «Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետին, 9.1-ին հոդվածի 2-րդ մասին և 21.1-ին հոդվածին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո սույն օրենքով սահմանված անձանց ներված՝ մինչև պատերազմական գործողությունների ավարտը ստացված վարկի կամ այլ գումարների, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և (կամ) տուգանքների նկատմամբ:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարների վրա:

4. Սույն օրենքի 6-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2020 թվականի հաշվետու տարվանից սկսած:

5. Օրենքի 21.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված արտոնությունից օգտվող անհատ ձեռնարկատերերի մասով 2021 թվականի փետրվարի 20-ի դրությամբ կատարվում է Օրենքի 11-րդ հոդվածի 8.2-րդ մասով 2020 թվականի համար հաշվարկված նվազագույն եկամտային հարկի վերահաշվարկ, և ավել վճարված գումարները հաշվանցվում և (կամ) անհատ ձեռնարկատիրոջը վերադարձվում են «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն:

**1) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (29.10.14թ. ՀՕ-46-Ն) խմբագրությամբ:*

**2) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (25.03.15թ. ՀՕ-9-Ն) խմբագրությամբ:*

**3) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.12.15թ. ՀՕ-73-Ն) խմբագրությամբ:*

**4) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.06.16թ. ՀՕ-19-Ն) խմբագրությամբ:*

**5) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (22.12.16թ. ՀՕ-39-Ն) խմբագրությամբ:*

**6) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.17թ. ՀՕ-58-Ն) խմբագրությամբ:*

**7) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.17թ. ՀՕ-83-Ն) խմբագրությամբ:*

**8) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (20.12.18թ. ՀՕ-85-Ն) խմբագրությամբ:*

**9) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ օրենքի (14.06.19թ. ՀՕ-59-Ն) խմբագրությամբ:*

**10) «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (27.06.19թ. ՀՕ-72-Ն) խմբագրությամբ:*

**11) «Եկամտային հարկի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (22.07.19թ. ՀՕ-105-Ն) խմբագրությամբ:*

**12) «Եկամտային հարկի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ու ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (04.02.21թ. ՀՕ-7-Ն) խմբագրությամբ:*

**13) «Եկամտային հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (11.02.21թ. ՀՕ-17-Ն) խմբագրությամբ:*